ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _____ / Ի. Սարգսյան/

«01» սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզ, գ. Ակունք

Ակունքի միջն. դպրոց, 8-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Աբրահամյան Հերմինե Իգիթի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

Активация Windows
Чтобы активировать Windows,
раздел "Параметры".

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

8-րդ դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 15 տղա և 12 աղջիկ: Աշակերտների գերակշիռ մասը լավ սովորող աշակերտներ են: Ուսման առաջադիմությունը 100% է, իսկ ուսման որակը՝ 60 % է: Կազմակերպված դասարան է: Դասարանում առաջնային նպատակ է սահմանված թիմային միջավայրի ամրապնդումը, որտեղ իշխում են փոխադարձ սերն ու ապրումակցումը, փոխօգնությունն ու ընկերասիրությունը: Դասարանում կատարվում է լրջագույն աշխատանք, որ կրթվեն իրավագիտակից, մարդու հիմնարար իրավունքներն ու պարտականությունները գերակա համարող քաղաքացիներ, որ ոնց համար արժեք են գիտելիքն ու հայրենիքը, ազգային ավանդույթները, ընտանիքն ու ընկերությունը:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ա/ բ/ գ/ դ/

Դասարանի կազմակերպչական աշխատանքներ, դասասենյակի կահավորման և մաքրության պահպանում:

1. Աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զարգացում, տարաբնույթ թեմաներով զրույցներ, քննարկումներ, բանավեճեր, էքսկուրսիաներ, որոնք կսերմանեն ընկերասիրություն, հայրենասիրություն, մարդասիրություն և առանձնահատուկ ուշադրություն ազգային արժեքների և ավանդույթների նկատմամբ:

2.Աշակերտների անվտանգության և առողջության պահպանում, նրանց հաղորդակցման և համագործակցության կարողությունների զարգացում: Ծնողական ժողովների անցկացում, սերտ կապ ծնող-դպրոց-ուսուցիչ հարաբերություններում:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Երեխայի ճիշտ հոգեկերտվածքի զարգացման կարևոր գործոնն է նրա հոգևոր դաստիարակությունը: Սերմանել հարգանք ազգային մշակույթի, հոգևոր արժեքների նկատմամբ: Նրանք պետք է գաղափար կազմեն մեր եկեղեցական տոների մասին, պատկերացում ունենան դրանց ավանդույթների, ծիսակարգի և նշանակության մասին:

3.2 – Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, ճաշակը և գեղեցիկը գնահատելու կարողություններ զարգացնելու նպատակով հաճախել թանգարաններ, արվեստի սրահներ, պատկերասրահներ և այլն: Ունկնդրել դասական և ազգային երաժշտություն:

3.3 – Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Առաձնահատուկ վերաբերմունք ձևավորել պետության, պետական խորհրդանիշների նկատմամբ: Սերմանել և դաստիարակել աշակերտների մեջ հայրենասիրություն , հայրենիքը խոսքերի փոխարեն գործով սիրելու կարողություն ու հմտություն:

3.4 – Ֆիզիկական դաստիարակություն

Ընդգծել ֆիզկուլտուրայի կարևորությունը մարդը լիարժեք ինքնիրացման գործում: Կարողանան տարբերակել առողջ սնունդը, իմանալ և գիտակցել դրա դերը առողջության պահպանման հարցում, ունենան առողջ քնի և և հանգստի իրավունք, զբաղվեն մարմնակրթությամբ, կոփեն մարմինը: Հետևել, որ աշակերտները մասնակցեն դպրոցում կազմակերպվող սպորտային միջոցառումներին: Անցկացնել զրույցներ անձնական հիգիենայի և առողջության վերաբերյալ:

3.5 – Աշխատանքային դաստիարակություն

Դպրոցական գույքի , դասագրքերի պահպանում և դրանց խնամքի գիտակցում: : Յուրաքանչյուր աշխատանքի հաջողության գրավականը ամուր և համապարփակ գիտելիքն է, ապա նաև դրա կիրառման կարողությունն ու հմտությունը:: Հետևել, որ բոլոր աշակերտները դպրոցում ներգրավվեն իրենց կարողություններին համապատասխան աշխատանքում և գնահատեն ու կարևորեն աշխատանքը:

3.6 – Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք: Բակը, դպրոցը համարեն իրենց սեփականությունը և հոգ տանեն մաքրության և բարեկարգման համար: Հասնել այն գիտակցությանը, որ բնության պահպանությունը յուրաքանչյուրիս գործն է, իսկ երկիր մոլորակը բոլորիս տունն է:

4. Դպրոց-ընտանիք կապը

Անձի, աշակերտի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար խիստ կարևորվում է դպրոց-ընտանիք, ուսուցիչ-ծնող անմիջական կապը, երկու կողմերի նպատակների հատման կետում աշակերտն է, նրա ցանկալի ապագան: Կազմակերպել զրույց ընտանիքում երեխաների և մեծերի փոխհարաբերությունների մասին: Կազմակերպել ծնողական ժողովներ, ցանկացած խնդրին լուծում տալ: Ամրապնդել դպրոց ընտանիք կապը: Ծնողներին ներգրավել դպրոցական առօրյա գործերի մեջ, ապահովել նրանց մասնակցությունը տարբեր միջոցառումներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

N	**Ուս. աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Կատարող**
1	Թիմային միջավայր, դասարանական կանոնների համաստեղծում	I	Դասղեկ, աշակերտներ
2	Ջոհարիի մոթոդով ինքնաճանաչում	II	Դասղեկ, աշակերտներ
3	Քննարկում «Հայրենիքը սիրում են գործով» թեմայով	III	Դասղեկ, աշակերտներ
4	Զրույց. «Ես ուզում եմ և կարող եմ» թեմայով	IV	Դասղեկ, աշակերտներ
5	«Լավագույն գիրքը» քննարկում	V	Դասղեկ, աշակերտներ
6	Քննարկում «Ընկերությունը ուժ է»	VI	Դասղեկ, աշակերտներ
7	Կարևոր արժեքներ	VII	Դասղեկ, ծնողներ, աշակերտներ
8	Բանավեճ «Անտարբերությունը և շահերի բախումը» թեմայով	VIII	Դասղեկ, զինղեկ, աշակերտներ
9	Զրույց «Իմ բնավորության լավ ու վատ կողմերը» թեմայով	IX	Դասղեկ, աշակերտներ
10	Ապրումակցում և անտարբերություն	X	Դասղեկ, աշակերտներ
11	Բնակավայրի բնորոշ աղետները, տարածաշրջանային մարտահրավերներ	XI	Դասղեկ, զինղեկ, աշակերտներ
12	Զրույց «Անհատ և քաղաքացի» թեմայով	XII	Դասղեկ, աշակերտներ
13	Գիտության դերը մարդու կյանքում	XIII	Դասղեկ, աշակերտներ
14	Քննարկում «Իրավունք և պարտականություն» թեմայով	XIV	Դասղեկ, աշակերտներ
15	Հայկական եկեղեցական տոները և դրանց խորհուրդը	XV	Դասղեկ, աշակերտներ
16	Հայկական պետական տոները և դրանց խորհուրդը	XVI	Դասղեկ, աշակերտներ
17	Զրույց «Հայոց մեծերը» թեմայով	XVII	Դասղեկ, աշակերտներ

18	Անվտանգային կանոններ և ինքնապաշտպանություն	XVIII	Դասղեկ, զինղեկ, աշակերտներ
19	«Ո՞վ է հերոսը». բաց քննարկում	XIX	Դասղեկ, զինղեկ, աշակերտներ
20	«Գիտելիքը ուժ է»	XX	Դասղեկ, աշակերտներ
21	«Մարդը բնության մասնիկն է»- զրույց-քննարկում	XXI	Դասղեկ, աշակերտներ
22	Հայոց մեծեր	XXII	Դասղեկ, աշակերտներ
23	Բնության հրաշալիքներ	XXIII	Դասղեկ, աշակերտներ
24	Պետականություն և ազգային արժեքներ	XXIV	Դասղեկ, աշակերտներ
25	Հայկական հնագույն մշակութային կոթողներ	XXV	Դասղեկ, աշակերտներ
26	Հայազգի գիտնականներ, որոնք «փոխել» են աշխարհը	XXVI	Դասղեկ, աշակերտներ
27	Հայկական մշակույթ. . .	XXVII	Դասղեկ, աշակերտներ
28	Զրույց «Ի՞նչ է ընկերությունը, ո՞վ է իսկական ընկերը» թեմայով	XXVIII	Դասղեկ, աշակերտներ
29	Մեդիագրագիտություն և անձնական տվյալների պաշտպանություն	XXIX	Դասղեկ, աշակերտներ
30	«Բոլոր մարդիկ հավասար են»- զրույց հանդուրժողականության մասին	XXX	Դասղեկ, աշակերտներ
31	Աշակերտների գործողությունները պատերազմի ժամանակ	XXXI	Դասղեկ, զինղեկ, աշակերտներ
32	Սիմուլյացիոն խաղ. հասարակություն	XXXII	Դասղեկ, աշակերտներ
33	Զրույց «Բուլինգ» թեմայով	XXXIII	Դասղեկ, աշակերտներ
34	Զրույց «Ես բնության մի մասնիկն եմ» թեմայով	XXXIV	Դասղեկ, աշակերտներ